

մին դասիւք, որք ողջունէին, համբուրէին, հրճւէին, յուղարկէին, առաջնորդէին. զի որքան մարդկայինքնս տրտմէին, հրարոցքն ուրախանաին, զի թէ ի ներքնոցս պակասեաց՝ ի վերինսն յաւելաւ, յաղագս որոցընծացեալ եռակի եռիցն:

Արթնանայր աթոռն, քրքրէր քերովբէն, սաղմոսէր սերովբէն, առփէր տէրութիւնքն, զըւարճանայր զաւրութիւնքն. իշխանութիւն տաին իշխանութիւնքն, պատուէին պէտքն, հրճւէին հրեշտակապետքն, համբուրէին հըրեշտակքն. և համագումար եղեալ իննեակ դասուցն, աւրհնէին զովին զըգւէին, և իւրաքանչիւր յիւր զասն կոչէին. թերեւ և ընդ միմեանս կազէին կարգել ընդ նոսա ըղնմանն նոցա: Եւ առեալ մուծին յեթնաստեղեան խորանսն, առ մայրն Տեառն և բովանդակ կուսանսն, և մեծարէին բոցափայլքն՝ և խրրախ յարդարէին: Ելանէր և Հայրն՝ և անկանէր զպարանոցաւն, զգեցուցանէին պատմութեան, զնէին մատանի, տաին կաւշիկ, զենուին զըւարակ, ուտէին ըմպէին ուրախ լինէին:

Հայրն հիւրընկալ, Որդին մատուռակ, Սուրբ Հոգին բաժակ, իմաստութիւնն կերակուր, այսպիսեաց՝ այսգոն է արժանն և ընդունելութիւնն: